## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար պարբերական հրապարակումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» հունիսի 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Հովհաննես Ստեփանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Լիլիթ Հովհաննիսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Ասատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/19» ծածկագրով ընթացակարգի ներկայացված հայտի բացման մասին.**

Հայտը բացվել է www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի հունիսի 24-ին, ժամը 11:00-ին:

**2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Պարբերական հրապարակումներ /ՀՀ Պաշտոնական տեղեկագիր/ | 1 860 000 |
| 2. | Պարբերական հրապարակումներ /ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր/ | 930 000 |

**3. Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլ. փոստի հասցեն |
|---|---|
| «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ | sona_ghazaryan1985@mail.ru |

Ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**5. Տվյալներ՝ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**6. Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**7. Մասնակցի առաջարկած գներն են.**

*ՀՀ դրամ*

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Պարբերական հրապարակումներ /ՀՀ Պաշտոնական տեղեկագիր/ | 1 550 000 | 310 000 | 1 860 000 |
| 2 | Պարբերական հրապարակումներ /ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր/ | 775 000 | 155 000 | 930 000 |

**8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.**
Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.
- 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**
Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝
1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,
2) հայտերի բացման նիստին ներկա հանձնաժողովի անդամների և իր կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,
3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. հունիսի 27-ը ներառյալ, ներկայացնել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

**-ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. հուլիսի 1-ին, ժամը 11:00-ին:**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Հովհաննես Ստեփանյան

Գրիգոր Գաբրիելյան

Էդգար Տոնականյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան